№ 196 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 196

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօներից).

Յայտարարութիւն ը[illegible]

Յայտարարութիւնն[illegible]
իւրաքանչիւր տողին [illegible]

Տպարանի տելեֆոն № 67.

ՄԵՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐԸ ԳՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ
10 ՀԱՏ „Ա Դ Ա" 6 ԿՈՊ.
խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ֆիրմայի վրա
ԸՆԿ. Ա. Ն. ԲՕՂԴԱՆՕՎ ԵՒ ԿՕՄՊ.
ՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳԵՐԲՈՎ,
որովհետև վաճառքի են հանված մեր պապիրօսների փաթեթներին նման՝ սակայն յատկութեամբ շատ վատ պապիրօսներ։
Ընկ. Ա. Ն. ԲՕՂԴԱՆՕՎ եւ Կօմպ.
Ներկայացուցիչ ՍՏԵՓԱՆ ՆԻԿԻՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ
(25օգ.,8ս.,11 հոկտ.) 769. 3—2 Թիֆլիս, Բէբուտօվսկայա 37.

ФАБРИКИ
А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.
662. 100—36

ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
(ե. հ. կ.) տո.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ռ. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ և այլն։ Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ, չքաւորներին ձրի։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը Նորափողոցից։
(ե.հ.կ.) տո. 876. 50—1

ԲԺԻՇԿ
Ա. ՇԻԽԵԱՆ
Վեներական հիւանդների
Ընդունելութիւնը
Գանօվսկայա փողոց № 15.
(ե.հ.կ.) տո. 871. 3—2

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւնների
ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կոչուբէեվսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(ե. հ. կ.) տո. 243. 100—66

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆՑ
Ներքին եւ երեխայոց
Հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(ե.հ.կ.) տո. 819. 100—7

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ստոլիպինի եղերական մահից յետոյ հարց է ծագում նոր պրեմիեր-մինիստրի մասին։

Այդ պաշտօնը ներկայումս յանձնըված է ֆինանսների մինիստր Կոկովցեվին։ Կը մնայ, արդեօք, այդ պաշտօնը Կոկովցեվի ձեռքին թէ կը տրվի մի ուրիշին, չը գիտենք. բայց բնականաբար խնդիր է առաջ գալիս պրեմիեր-մինիստրի իրաւունքների և ձեռնհասութեան ծաւալի մասին։

Ստոլիպինի ձեռքին պրեմիեր-մինիստրի պաշտօնը ստացաւ առանձին նշանակութիւն։ Ստոլիպինը, կանչված լինելով նորաստեղծ մի դերի կատարման անցողակի շրջանի չափազանց պատասխանատու ժամանակ, հանդէս եկաւ իբրև ներքին քաղաքականութեան ղեկավարող ոյժ, որը որոշ գոյն և բնաւորութիւն էր տալիս կառավարութեան վարչական գործողութիւններին։

Պրեմիեր-մինիստրը, թէ իբրև նախագահ մինիստրների խորհրդի, թէ իբրև կառավարութեան առաջին ներկայացուցիչ Պետական Դումայի և Պետական Խորհրդի մէջ, կոչված էր բարդ, ծանրակշիռ մի պաշտօնավարութեան, որը պէտք է կարողանար հաշտեցնել նախկին և ներկայ պետական գործերը սահմանադրական կարգերի հետ։

Այդ հիմնական պահանջը մնում է առաջիկայի համար աւելի ևս մեծ չափով, քան մինչև այժմ, որովհետև շատերը այն ծրագիրներից, որոնք ուրուագծվել էին Պետական Դումայի [illegible] առաջ են գալիս իբրև հերթական խնդիրներ քննվելու օրէնսդրական պալատներում։

Ռուսաստանը ծանր օրերից, արտաքին և ներքին մաքառումներից յետոյ՝ պէտք է կարող լինի ոտք դնել կանոնաւոր կուլտուրական և քաղաքական զարգացման հողի վրա։ Սահմանադրութիւնը, որ այնքան խորթ էր թւում շատերին, արդէն կարողացաւ կանոնաւոր նստաշրջաններ բոլորել և դառնալ պետական կեանքի հիմնական օղակներից մէկը։ Ճիշդ է, այդ նստաշրջանները դեռ աչքի ընկնող լրջմիտ արդիւնքներ չեն առաջացրել, բայց նրանք ներկայանում են իբրև հիմնական շաւիղներ, որոնց օրինակով պէտք է հարթվեն նոր շաւիղներ՝ բաւարարութիւն տալու կեանքի հերթական պահանջներին։

Ս. Քալանթար

ՍՏՈԼԻՊԻՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6 սեպտեմբերի

Կիէվ.—Բարձրագոյն հրովարտակ երկրի կառավարիչ գեներալ-ադիւտանտ Տրէպօվի անունով.

«Ֆէօդոր Ֆէօդորովիչ! Հինաւուրց Կիէվում գտնված միջոցին և Հարաւ-Արևմտեան երկրի զանազան տեղերը այցելելու ժամանակ ազգաբնակութեան բոլոր խաւերի Մեզ ցոյց տուած սրտագին ընդունելութիւնը շատ զգացրեց Ինձ և Թագուհի Կայսրուհուն։ Մեր ուրախ տրամադրութիւնը մռայլվեց՝ Իմ ներկայութեամբ Իմ հաւատարիմ ծառայ, իր պարտականութիւնը գերազանց կատարող մինիստրների խորհրդի նախագահի կեանքի դէմ ոճրագործի կատարած մահափորձից։ Սակայն, ամեն կողմից մեզ հասնող անկեղծ ցաւակցութիւնը կատարված ոճիրի առիթով համոզում են Մեզ, որ Կիէվի, ինչպէս նաև Մեր այցելած տեղերի բոլոր ողջախոհ ազգաբնակութիւնը, համակված սուսկ իր Միապետին հանդէսով ընդունելու ցանկութեամբ, Մեզ հետ միասին լի է զայրոյթի զգացմունքով։ Մեր յիշողութեան մէջ հանապազ անջնջելի կը մնայ Կիէվի ազգաբնակութեան, երկրի, ազնուականութեան, զեմստվօյի և գիւղացիութեան ներկայացուցիչների Մեզ արտայայտած սէրը առ հայրենիքը և Գահը։ Արևմտեան վեց նահանգների կողմից Ինձ ներկայացած պատգամաւորութիւնը համոզում է Ինձ այն բանում, որ ազգաբնակութեան բոլոր խաւերը իրանց ոյժերը ու գիտութիւնը՝ համաձայն Իմ ցուցումների կը նուիրեն Մեր թանգագին Ռուսաստանի և արևմտեան երկրի ծառայութեան։ Յանձնարարում եմ ձեզ հաղորդել Հարաւ-Արևմտեան երկրի և Կիէվի հանուր ազգաբնակութեան Իմ և Թագուհի Կայսրուհու անկեղծ շնորհակալութիւնը Մեզ ցոյց տուած ջերմ ընդունելութեան համար։ ՆԻԿՈԼԱՅ»։

Տրված է Կիէվում, սեպտ. 6-ին, 1911 թ.։
Մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնակատար ստատս-սեկրետար՝
Կոկովցեվ

Կիէվ.—Երկրի կառավարիչը տեղեկացնում է ազգաբնակութեան. «Ներկայումս նկատելի է Կիէվի բնակիչների գրգռված տրամադրութիւնը, որ մի քանի խաւերում ստեղծում է հնարաւոր յուզմունքների երկիւղ, որը [illegible] դրդում է ինձ հանգստացնելու համար սրանով յայտնել, թէ ես ձեռք եմ առել միջոցներ՝ որևէ կարգ ու կանոնի խախտում թոյլ չը տալու նպատակով։ Ընդ սմին անհրաժեշտ եմ գտնում նախազգուշացնել քաղաքի ազգաբնակութեան, որ ամեն տեսակ բռնութիւն ու անկարգութիւն ես կը ճնշեմ ամենակտրուկ կերպով»։

Կիէվ.—Տիկին Ստոլիպինը ստանում է անթիւ ցաւակցական հեռագիրներ։ Ցաւակցութիւն յայտնեցին Թագուհի Կայսրուհին, Մեծ Իշխանուհիները, արտասահմանեան ռուս դիպլօմատիկան ներկայացուցիչները, ռուսական պալատին կից պաշտօնավարող արտասահմանեան դիպլօմատիկան ներկայացուցիչները, Պետական Խորհրդի և Դումայի անդամները և նախագահները, կենտրօնական ու տեղական կառավարական հաստատութիւնների ներկայացուցիչները, հասարակական դասերը, հաստատութիւնները, աջակողմեան քաղաքական կազմակերպութիւնների կոմիտէները, Պետական Դումայի հոկտ. 17-ի միութեան ֆրակցիան, մասնաւոր անձինք։ Հանգուցեալի մարմինը դըրված է կաղնեայ դագաղի մէջ։ Դագաղի մօտ է շարունակ վշտացեալ այրին։ Դրվում են բազմաթիւ պսակներ, որոնց մէջ աչքի է ընկնում կոմս Գենդրիկօվի դրած թարմ ծաղիկների խաչը Թագաւոր Կայսրի կողմից։

Ստոլիպինի հիւանդութեան օրհասական վախճանը նախատեսվում էր։ Երէկ առաւօտից հիւանդը պառկած էր մարած զարկերակով. կեանքը պահպանվում էր գրգռիչ միջոցներով։ Առողջութեան խիստ վատացումը բացատրվում է ներքին արիւնհոսութեամբ։ Երեկոյեան ժամը 8-ին հիւանդը հաղորդվեց։ Գիտակցութիւնը կորաւ մահվանից մի փոքր առաջ։ Ժամը $8^{1}/_{2}$-ին սկսվեց մահվան տագնապը, որ տևեց 23 րոպէ։ Ստոլիպինը մեռաւ կնոջ ձեռքերի վրա։ Հիւանդանոց այցելեցին Կոկովցեվը, Շչեգլօվիտօվը, երկրի պետը և այլք։ Գիշերվայ ժամը 1-ին համալսարանի ակադեմիստ-ուսանողների և հասարակութեան խնդրանօք Միքայէլեան վանքում կատարվեց հոգեհանգիստ։ Մահվան տեղեկութիւնը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքում։ Տրամադրութիւնը չափազանց ճնշված է։

Կայսրը պալատի մինիստրի և պալատական կոմենդանտի ուղեկցութեամբ այցելեց Մակովսկիի հիւանդանոցը, ուր գտնվում է Ստոլիպինի մարմինը, և բարեհաճեց աղօթել հոգեհանգստին և բաղդաւորեցրեց հանգուցեալի այրուն ցաւակցական ողորմած խօսքերով, յետոյ մեկնեց պալատ։

Ստոլիպինի մահվան առիթով բոլոր եկեղեցիներում կատարվում են հոգեհանգիստներ։ Շատ դպրոցներում և հասարակական հաստատութիւններում պարապմունքները ժամանակաւորապէս դադարեցին։ Բոլոր թատրօններում ներկայացումները յետաձգվեցին։ Վլադիմիրեան տաճարում հոգեհանգստին ներկայ էին Կիէվում գտնվող մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաներ և բազմաթիւ աղօթողներ։ Թաղումը տեղի կունենայ Կիէվում, համաձայն հանգուցեալի կամքի, որ յայտնեց մահվանից առաջ։ Մարմնի յուղարկաւորութիւնը հիւանդանոցից նշանակված է չորեքշաբթի, ժամը 2-ին, դէպի եկեղեցի։ Հինգշաբթի կը կատարվի հոգեհանգիստ։ Թաղումը կը լինի սեպտ. 9-ին Լավրի բակում, ուր այժմ կայ մի պատմական դամբարան՝ փառապանծ Կոչուբէյի և Իսկրի, որի համար և ստացվել է Բարձրագոյն հաճութիւն։

Պետերբուրգ.—Ռուսաց ժողովարանի շինութեան մէջ տեղի ունեցաւ ազգային-միապետական կազմակերպութիւնների ներկայացուցիչների չափազանց բազմամարդ ժողովը։ Կրակոտ ճառերի մէջ հռետորները ընդգծեցին, որ մեծագոյն երկչոտութիւն կը լինի, եթէ ռուս հասարակութիւնը ամենաչնչին զիջումն անի յեղափոխութեան և օտարազգիների սպառնալիքներին։ Վերջում ժողովը միաձայն որոշում կայացրեց, թէ ներկայումս ռուսական ազգային սկզբունքներից հրաժարվէր տէրրորի խրախուսանք կը [illegible]

Մայրաքաղաքի բոլոր լրագիրները այսօր յօդուածներ և նեկրոլօգներ են նուիրել Ստոլիպինի մահվան։ Մի քանիսը լոյս տեսան սև շրջանակներով։ Բոլորի մէջ կայ հանգուցեալի պատկերը։ Առաւօտից կառավարական հաստատութիւններում կատարվում են հոգեհանգիստներ։ Բոլոր եկեղեցիներում կատարվում են նոյնպէս հոգեհանգիստներ բարձր իշխանութեան ներկայացուցիչների ներկայութեամբ։

Այսօր արտակարգ գնացքով Կիէվ մեկնեցին մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Պլեվէն և դիւանատան պաշտօնեաների պատգամաւորութիւնը Ստոլիպինի դագաղի վրա արծաթեայ պսակներ դնելու համար։ Հոկտեմբերեանները որոշեցին պատգամաւորութիւն ուղարկել Գուչկօվի գըլխաւորութեամբ և դնել արծաթեայ երկու պսակ։

Ստոլիպինի յիշատակի հոգեհանգստից յետոյ, նախկին մինիստրական կոմիտէի դահլիճում Խարիտօնօվի նախագահութեամբ կայացաւ մինիստրների խորհրդի արտակարգ նիստը, որից յետոյ տ. Ստոլիպինին ուղարկվեց այսպիսի հեռագիր. «Մինիստրների խորհուրդը, աղօթելով իր անմոռանալի նախագահ ամենայարգելի Պեօտր Արկադիևիչի հոգու հանգստեան համար, խնդրում է ձեզ ընդունել սրտանց ցաւակցութիւն, և թող Տէրը ձեզ օգնէ ձեր ծանր փորձութեան մէջ»։

Համառուսական ազգային միութիւնը որոշեց համառուսական հանգանակութիւն բանալ Ստոլիպինի մահարձանի համար։

Համաձայն ստացված բազմաթիւ հեռագիրների, տեղերում Ստոլիպինի մահվան բօթը ցնցող տպաւորութիւն է գործել։ Շատ թատրօններում այսօր ներկայացումները յետաձգվել են։ Ամենուրեք հոծ բազմութեան ներկայութեամբ կատարվում են հոգեհանգիստներ։ Կիէվ են ուղարկվում շատ պատգամաւորութիւններ։

Պարիզ.—Լրագիրները ողբում են Ստոլիպինի մահը, անուանելով այդ մեծ կորուստ Ռուսաստանի և Եւրոպայի համար։

Վիէննա.—Լրագիրների մեծ մասը խօսում է Ստոլիպինի մահվան մասին, ընդգծում է նրա բարձր յատկութիւնները, հայրենասիրութիւնը, հաստատ կամքը, պարտականութեան գիտակցութիւնը մեծ խնդիրների իրագործման ժամանակ։ Քիչ բարեացակամ «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսէն» անգամ համակրական յօդուած է նուիրել հանգուցեալին։

Կ. Պոլիս.—Սուլթանը և Բ. Դուռը հեռագրով Կայսրին ցաւակցութիւն յայտնեցին Ստոլիպինի մահվան առիթով։ Պետերբուրգի թիւրքաց դեսպանին յանձնարարված է անձամբ ցաւ յայտնել տ. Ստոլիպինին։

Բերլին.—Բոլոր լրագիրները չափազանց սրտագին յօդուածներ են տպել Ստոլիպինի մահվան առիթով։ Մամուլը զայրոյթ է յայտնում չը տեսնված ու չը լսված զազիր յանցանքի առիթով։ Ընդգծվում է մահացու վիրաւորված մինիստրի հերոսութիւնը։

Կիդերլէն-Վեխտէրը և ալեքսանդրեան գնդի հրամանատարը այցելեցին ռուսաց դեսպանատունը և ցաւակցութիւն յայտնեցին դեսպանին։ Բերլինի հասարակութիւնը վշտակից է ռուսներին։

Պարիզ.—Ֆալիէրը հեռագրով անկեղծ ցաւակցութիւն յայտնեց Կայսրին, Դեսէլվը Պետերբուրգի ֆրանսիական դեսպանին խնդրեց ռուսաց կառավարութեանը յայտնել հանրապետական կառավարութեան ցաւակցութիւնը։

Լօնդօն.—Բացառութեամբ «Morning Leader»-ի և «Daily News»-ի, բոլոր լրագիրները չափազանց համակրական յօդուածներ են տպել Ստոլիպինի յիշատակին, յիշում են, որ Ստոլիպինը Անգլիայի հաւատարիմ բարեկամն էր։ Լրագիրները ասում են, որ Ստոլիպինի մահը Անգլիայում մեծ վիշտ ու ցաւակցութիւն առաջ բերեց։ [illegible] Սըր-Էդուարդ Գրէյը ցաւակցական նամակ ուղղեց ռուսաց դեսպանին։

Վիէննա. — Էրենտալը կառավարութեան անունից ցաւակցութիւն յայտնեց Ստոլիպինի մահվան առիթով։

Հէլսինգֆօրս. — Ուսպենսկի տաճարում բարձրաստիճան իշխանաւորների և դպրոցականների ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ Ստոլիպինի համար։

Պրագա.—Ռուսաց հիւպատոսարանին ցաւակցութիւն յայտնեցին չեխերի ազգային խորհուրդը, քաղաքային վարչութիւնը և զանազան կազմակերպութիւններ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6 սեպտեմբերի

Կիէվ.—Պալատի մինիստրի հեռագիրը. «Նորին Մեծութիւնները Գահաժառանգի և Օգոստափառ աղջիկների հետ այսօր, սեպտ. 6-ին, մեկնեցին Սեվաստօպօլ։ Ազգաբնակութիւնը և իշխանութիւնները մեծ ոգևորութեամբ ճանապարհ դրին իրանց սիրելի Միապետին»։

Մադրիդ.— Թագաւորը հրովարտակ հրատարակեց ամբողջ երկրում սահմանադրական երաշխաւորութիւնները վերացնելու մասին։

Հաագա.—Զանազան կուսակցութիւնների 20,000 մարդու ներկայութեամբ կայացաւ ցոյց յօգուտ ընդհանուր ընտրողական իրաւունքի։ Ներքին գործերի մինիստրութիւնը ստացել է բազմաթիւ ուղերձներ։

Ցէտինիէ. — Վերադարձաւ Նիկօլայ թագաւորը ճանապարհորդութիւնից։ Նա իրան շատ լաւ է զգում։

Բերլին.—Վախճանվեց հակասեմիտների յայտնի պարագլուխ ռէյխստագի պատգամաւոր Լիբէրման ֆօն-Զօնէնբէրգը։

Պէկին.—Գուչժօու նահանգի կառավարչին հրամայվեց Սիչուան ուղարկել բոլոր ազատ զօրքերին։

Տօկիօ.—Ճան. հաղ. մինիստրի բնակարանը մտաւ գիշերով մի գող, որ դանակով վիրաւորեց մինիստրին երեսից և ուսից և փախաւ։

ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 սեպտեմբերի

Վիէննա.—Այն փողոցներն ու հրապարակները, ուր տեղի ունեցան անկարգութիւններ, ցաւալի պատկեր են ներկայացնում։ Առանձնապէս վնասվեցին պետական ու քաղաքային շինութիւնները։ Հազարաւոր պատուհաններ ջարդված են։ Ճաշարաններում եղածչեղածը ջարդուփշուր է արված։ Լրագիրների մեծ մասը խստագոյնս դատապարտում է անկարգութիւնները։ Վճռված է առայժմ պատերազմական դրութիւն չը յայտարարել։ Այսօր հանգիստ անցաւ։ Օտտակ-Րինգում անկարգութիւնները վերսկսվեցին։ Եղան բազմաթիւ ընդհարումներ զօրքերի հետ։ Դրութիւնը համարվում է սպառնական։

Լօնդօն.—Իռլանդիայի երկաթուղային գործադուլին միացաւ Կվինսդօունը։ Դրութիւնը լուրջ է։

Դուբլին.—Երկաթուղային բանւորները որոշեցին իռլանդական երեք գլխաւոր գծերի վրա գործադուլին վերջ դնել։

Վալէնսիա.—Քաղաքային բանւորները չեն աշխատում։ Հեծելազօրը գրաւեց ռազմական տեղերը։ Ժանդարմները մի անգամ սրերը մերկացրին։ 21 մարդ կալանաւորված են։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Բ. Դուռը, կրէտական հարցի մասին մեծ պետութիւնների հաղորդագրութիւնը պաշտօնական ընդունելով, սպասում է պատասխանի իր այն նօտային, որով պահանջվում է հարցի վերջնական լուծումն։

Պետերբուրգում պաշտօնավարող դեսպան Թուրխան փաշան 2 ամսով արձակուրդ է ստացել։

Բարֆրուշ.—Երեկոյեան Սարիից վերադարձաւ մէջլիսի զօրամասը և շուտով պատրաստվում է Թէհրան մեկնել։

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Կ. Պոլիս, 27 օգոստոսի

Տասն օրը մեծ ժամանակ է ուսումնասիրելու համար այն հարցերը, որ ես ինձ նպատակ էի դրել, այցելելով Պոլիսը։ Սակայն շատ աննպաստ պայմաններ բաւականին խոչընդոտ հանդիսացան ինձ։ Հաղորդակցութիւնները Կ. Պոլսում շատ անյարմար են և շատ ժամանակ են խլում. մանաւանդ ամառը մեծ դժուարութիւններ են ներկայացնում, որովհետև բնակիչները ցրված են զանազան արուարձաններում, ամարանոցներում, որոնք իրարից շատ հեռու են և որոնց միջև հաղորդակցութիւնը շոգենաւերով է կատարվում։ Ապա, պէտք է յիշել, որ ազգային հաստատութիւնները Կ. Պոլսում նոյնպէս ցրված են զանազան, իրարից շատ հեռու թաղերում։ Երրորդ, չը կայ Կ. Պոլսում հեռախօս, և եթէ դուք կամենում էք այցելել մի անձի, պէտք է մի կամ երկու օր առաջ պօստային նամակով կամ այլ եղանակով ծանուցանէք, որպէսզի կարողանաք ապահովաբար նրան տանը գտնել։ Յաճախ, մի անձի այցելելու համար, դուք ստիպված էք լինում ամբողջ օրը կորցնել։ Օրինակ, երէկ ես գնացի այցելութիւն տալու Նախորդ պատրիարք Դուրեան Եղիշէ սրբազանին, որ ապրում է Բէյիւք-Դէրէ կոչված արուարձանում։ Ղալաթիայի կամուրջից շոգենաւ նստելով առաւօտեան ժամը 10-ին, հասայ Բէյիւք-Դէրէ ժամը 12-ին։ Մնալով սրբազանի մօտ 2 ժամ, ես վերադարձայ դարձեալ շոգենաւով և հասայ իմ բնակարանը ժամը 4-ին։

Խօլերայի համաճարակն ևս բաւական մեծ արգելքներ է յարուցանում հաղորդակցութեան համար։

Եւ սակայն, չը նայելով որ ես 2 օր ես ծանրապէս հիւանդ էի (միայն շնորհիւ ազնիւ դօքտոր Թորգոմեանի և հ. Ս. Երեմեանի ես շուտով առողջացայ), ես կարողացայ 8 օրվայ ընթացքում այցելել հայոց ազգ. երեսփոխանական ժողովը՝ ներկայ լինելով նրա օգոստոսի 19-ի նիստին, այցելել պատրիարքական տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսին, Օրմանեան և Դուրեան արքեպիսկոպոսներին, այցելել «Բիւզանդիոն», «Արևելք», «Ժամանակ», «Le Jeun Turc» լրագիրների խմբագրութիւնները, Միացեալ Ընկերութեանց վարչութիւնը, հայ սահմանադիր-ռամկավարների ժողովը, Վենետիկի և Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնները, ռուսաց և պարսից դեսպանատները, ներկայ լինել սահմանադիր-ռամկավարների Սկիւտարի ակումբի ժողովին և մի փոքր ատենախօսութիւն անել։

Այս այցելութիւնների ժամանակ, բնականաբար, մեր խօսակցութեան գլխաւոր առարկաներն էին ազգային գործերը—պատրիարքական, կաթողիկոսական հարցերը, դաշնակցականների դատը, նրանց ունեցած այժմեան դիրքը և գործունէութիւնը, Հայաստանի վիճակը, մանաւանդ հողային և կրթական հարցը, նաև զուտ գրական հարցեր։

Պէտք է ասեմ, որ ես անչափ գոհ եմ իմ այժմեան ուղևորութիւնից։ Եւ այդ ոչ այն պատճառով, որ ես ամեն տեղ գտայ սիրալիր և խիստ բարեկամական ու համակրական ընդունելութիւն, մանաւանդ խմբագրութիւնների և մեր գաղափարակից սահմանադիր-ռամկավարների կողմից, հայ գրողների և գործիչների կողմից, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ ես առիթ ունեցայ անձամբ ուսումնասիրել, լուսաբանել և պարզել մի քանի հարցեր, որոնց հեռուից մեզ, ռուսահայերիս և մանաւանդ «Մշակի» համար մութ, ամպամած էին մնում։ Եւ, վերջապէս, ես նորից և անձամբ համոզվեցի, թէ այստեղի մտաւորականութեան (այստեղ այսպէս են կոչում ինտելիգենցիային) մէջ որքան մեծ համարումն և անկեղծ համակրութիւն կայ դէպի «Մշակը», որպէս ողջմիտ, ուղղամիտ և բուն ազատական-ազգային գաղափարները սկսել են ամրանալ նոյնիսկ կազմակերպվել՝ ջլատելու համար վնասակար և ազգակործան գործունէութիւնը։

Այժմ սկսեմ կարգով պատմել իմ տեսակցութիւններս և այցելութիւններս։

Հ. Առաքելեան

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 17 օգոստոս

◆ Քոլերան, որ Պոլսէն սկսած՝ Անատօլուի ներսերը տարածուիլ սկսած է, կը սպառնայ Հալէպի և Ադանայի կուսակալութիւնները ևս անցնիլ։

Ո՛չ առողջապահական միջոցներ ի գործ կը դրուին և ո՛չ ալ բժշկական կատարեալ կազմակերպութիւն կայ։ Ի խնամս Աստուծոյ ձգուած երկիր մը։

◆ Կիլիկիոյ մէջ երկու թեմ կայ, զորս, հակառակ ազգ. իշխանութեանց դիմումներուն, կառավարութիւնը—սահմ. ազատ կառավարութիւնը ըսել կուզեմ—ճանչնալ չուզեր, Հաճին և Զէյթուն։ Այս անուանց շուրջը յարուցուած դժուարութիւնները ինքնին պերճախօս ապացոյց չեն կառավարութեան՝ հայոց մասին տածած անվստահութեան զգացումներուն, մինչ առիթ չի փախցներ յայտարարելու միշտ, թէ հայերն են օսմանեան հայրենիքին ամենէն անկեղծ և հաւատարիմ ժողովուրդը։

Այս, հաւատարիմ, մի՛շտ զրկելու, մի՛շտ զարնելու և ուրիշներու դէմ իրենց անկարողութեան ոխը հանելու։

◆ Եթէ Զէյթուն թեմ չի ճանչցուիր, սակայն մօտիկ Ֆռնուզը թեմ մըն էր, որուն վանքը և աթոռը մեծ կոտորածներուն չը վարանեցան հիմնայատակ այրել, քանդել և կողոպտել։ Բազմաթիւ ձեռագիր հին մատեաններ այդ բարբարոս յարձակումներուն միջոցին կորան-գացին։

Աշունս երբ հոն էի, դեռ մեռած չէր վանահայր Նիկողոս եպիսկոպոսը՝ երբեմն հռչակաւոր իր քաջագործութիւններովը, և որ երեք անգամ մահուան դատապարտուած էր զանազան առիթներով և երկար ատեն բանտ ու աքսոր տեսած։

Ինծ՝ կրակէն ճողոպրած հին պատարագամատոյց մը ցոյց տուաւ ՉՇԳ թուին գրուած ի Սիս, Հեթում թագաւորին օրովը։ Պատարագին յիշատակին մէջ «Թագաւորաց քրիստոնէից»-էն վերջ գրուած էր «և բարեպաշտ թագաւորին մերոյ Լևոնի և զինուորեալ մանկանցն նորին» պարբերութիւնը։

Իսկ մօտիկ՝ Հին-Գիւղին եկեղեցիի վրան գտնուած յիշատակարանը հետևեալ արձանագրութիւնն ունէր. «Փառաց մեծ Արքային, օգնէ Հեթում թագաւորին, կատարեաց զգուսս ի թուին ՈԶ։ Յիշէ զկոստանդին, խնդրէ մեղայի թողութիւն»։

Հին խօսքեր, շիջած փառքեր։

Մի-Նա

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 29 օգոստոսի

Ատրպատականի թեմական կանոնադրութիւնը հրատարակվելուց յետոյ, որպէս և իցէ չէր աշխատվել գաւառներում թեմական ժողովներ և խորհուրդներ կազմել տալ ըստ արժանւոյն։ Անցած տարի Թէմիս ընդհանուր առաջնորդ Կարապետ եպիսկոպոս իր կատարած ուղևորութեան ժամանակ որոշ չափով գլուխ բերեց այդ պակասը. սակայն և այնպէս իր մեկնելուց յետոյ ընտրված մարմինները շատ տեղերում մնացին լոկ անուանական, առանց դրական գործի ձեռնարկելու՝ հետևելով իրենց պատմական անտարբերութեան։

Մարաղայում թեմակալ սրբազանը՝ ի նկատի առնելով տեղական հանգամանքները՝ գործակալական խորհուրդը և [illegible] մէջ ամփոփեց, որպէսզի դպրոցական և եկեղեցական գործերը նոյն մարմնի ձեռքով առաջ ընթանան։ Բայց, ի՛նչ ասել, որ սրբազանը Մարաղայից հեռացաւ թէ չէ, հոգաբարձու խորհուրդը հրաժարվեց, և գործերը մնացին առկախ, ինչպէս նաև ուսումնարանի բացման հարցը, որը կախված է միմիայն իրանց ջանքերից։ Տողերիս գրողը ուրիշ անգամ նոյնպէս առիթ ունեցել է «Մշակի» էջերում ողբ ու կոծեր կարդալու Մարաղայի հայ ժողովրդի այպանելի անտարբերութեան և անգործունէութեան մասին վերաբերութեամբ ազգային-կրթական գործերին։ Եւ կրկնում եմ. գաւառում ոչ մի տեղ այն չափով անտարբեր և միմեանց մէջ թայֆայական կռիւներով ու կնճիռներով կուրացած չեն, ինչպէս Մարաղայի շրջանի 150 ընտանիքից բաղկացած հայ ազգաբնակութիւնն է տարաբաղդաբար։ Նա մանաւանդ ուսումնարանը փակվելու վտանգին էր դատապարտվել։ Առաջնորդը՝ Թաւրիզի թեմական խորհրդի հետ համաձայն՝ մի ամիս առաջ որոշեց առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանային ուղարկել Մարաղա՝ հոգաբարձու-խորհուրդը կազմելու, դպրոցը բանալու և ուրիշ գործոց նայելու համար։ Տէր-Կարապետ քահանան գնաց և իբրև կարող անձնաւորութիւն շատ խօսք ու ջանք սպառեց, որ հին հոգաբարձութիւնը ընդունի իր պաշտօնը. դա անկարելի եղաւ. փոխանորդը ստիպվեց ընդհ. ժողով կազմել նոր հոգաբարձու-խորհուրդ ընտրելու նպատակով. չէր աջողվում, անտարբեր հասարակութիւնից ժողովի չէին մասնակցում։ Վերջապէս երրորդ անգամ պատրաստ ազգայինների ներկայութեամբ թէպէտ կազմեց նոր անհատներից հոգաբարձու-խորհուրդ, սակայն Կարապետ քահանայի մեկնելուց յետոյ նորերն էլ իրանց հրաժարականը ուղարկեցին, և ուսումնարանն ու միւս գործերը մնացին քամիների կամքին։

Մարաղացի հայ ազգաբնակութեան այսօրինակ յոյժ դատափետելի արարքը արժանի է միանգամայն հրապարակով դատապարտելու, այն էլ ինչպիսի օրերին, երբ ամեն մի հայ անհատից անպայման պահանջվում է սէր, գործ և կարեկցութիւն դէպի կրթութեան կարօտ մանուկները, որոնք թափառում են Մարաղայի փողոցներում։

Կարապետ եպիսկոպոս գրեց նամակներ, յորդորեց հոգաբարձութեանը ընդունել պաշտօնը և ջանալ բաց անելու ուսումնարանը՝ խոստումներ տալով հարկաւոր դէպքում աջակցութիւն չը խնայելու նրանց։ Յոյս ունենք, որ Մարաղայի հոգաբարձու խորհուրդը եռանդով կը մասնակցի կրթական գործի աջողութեանը և ազատ կը պահէ իրան նոր սերնդի ապագայ անէծքից։

Փոխանորդ քահանայի ջանքերով բացվեց Մարաղայի գրադարան-ընթերցարանը և ընտրվեց նոր վարչութիւն։

Հայկազուն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԱՐՍԱՓԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գերմանական ֆինանսական շուկայի վերջին տատանումները, աւելացնելով դրա վրա և ֆրանկո-գերմանական կոնֆլիկտը, անկասկած, ազդեցութիւն կը գործեն կառավարութեան քաղաքականութեան վրա։ Գերմանական սօցիալ-դեմօկրատների ցոյցերը, որքան էլ նրանք տպաւորիչ լինեն, չեն կարող համեմատվել իրանց ազդեցութեամբ գործերի ընթացքի վրա մանր և խոշոր սեփականատէրերի տրամադրութեան և գործելակերպի հետ։ Պատերազմի հնարաւորութեան հենց առաջին լուրջ նշանից սարսափահար եղած՝ նրանք թափվեցին բանկերը հանելու իրանց խնայողութիւնները և արժեթղթերը ծախելու համար։

Մի շատ բնորոշ դէպք տեղի ունեցաւ Շտէտինում։ Տեղական համագերմանական դաշնակցութեան «բարձր հայրենասիրական խումբը մի ժողով գումարեց, ուր ասպարէզ եկաւ Միւնխէնի յայտնի պանգերմանիստ պրոֆեսոր կոմս Դիւմուլէն։ Նա խօսում էր «Սեդանի արեգակի» մասին, Գերմանիայի պրէստիժի մասին, այն մասին, որ Մարոկկօյի համար արժէ պատերազմել», «Թմբուկների հենց առաջին ձայնից գերմանական ժողովուրդը կը ցնցվի, բայց ոչ թէ երկիւղից, այլ ուրախութիւնից». այդ խօսքերով աւարտեց նա իր ճառը։ Եւ յիրաւի, շտէտինցիները ցնցվեցին. քաղաքում լուր տարածվեց, որ եթէ մօբիլիզացիա յայտարարվի, պահեստի գումարների վերադարձը կը դադարեցվի խնայողական դրամարկղներից։ Առաւօտվանից դրամարկղները պաշարվեցին. մի օրվայ ընթացքում 2 միլիօն մարկից աւելի յետ պահանջվեց։ Նոյնը տեղի ունեցաւ և Բանգովում, Մէցում, Կէնիգսբերգում, Բադէնբուրգում և այլն։

Հետաքրքրական դէպք տեղի ունեցաւ Ֆրիդրիխսհաֆէնում. տեղական դպրոցական ուսուցիչը խօսում էր դասարանում 1870—1871 թւերի դէպքերի մասին՝ կապելով նրանց մարօկկեան բանակցութիւնների հետ. երեխաները պատմեցին իրանց ծնողներին, և նրանք վազեցին պետական դրամարկղի տեղական բաժինը՝ յետ պահանջելու իրանց խնայողութիւնները։ Մանր դրամատէրերի և պահեստի գումարների տէրերի սարսափը պէտք է որ մեծ տպաւորութիւն գործէր թէ դրամական շուկայի և թէ կառավարութեան վրա։ Պահեստադրամների ընդհանուր գումարը գերմանական պետական խնայողական դրամարկղներում հասնում է 18 միլիարդ մարկի. այդ ահագին գումարի մեծ մասը վերածված է պետական ռենտայի, իպօտէկային գումարների և արդիւնաբերական կրէդիտի։ Պահեստի գումարների համար, ըստ կանոնադրութեան, պատասխանատու է կայսերական բանկը։ Բայց նա ունի պահեստի 1¼ միլիարդ ոսկի մարկ։ Եթէ սարսափը շարունակվի խնայողական դրամարկղների պահեստագումարների տէրերի միջև, դա պէտք է առաջացնի արժեթղթերի շտապողական վաճառումն, այսինքն նրանց կուրսի անկումը։

Այն ինչ՝ ֆինանսական շուկայի դրութիւնը առանց դրան էլ կրիտիկական դարձաւ պատերազմի նոյն երկիւղների ազդեցութեան տակ։ Գերմանական մամուլի մի մասը աշխատում է բացատրել ճգնաժամը հացահատիկների գների բարձրացումով և այլն։ Սակայն այդ պատճառները առաջ էլ գոյութիւն ունէին և նրանք չառաջացրին կուրսերի յանկարծակի և խիստ տատանումն վերջին տասն օրերի ընթացքում, բայց նրանք ահագին կորուստներ պատճառեցին գերմանական ֆինանսական շուկային։ Այդ չափերը վկայում են արտասահմանեան մամուլի բերած հետևեալ փաստերը. պողպատի և քարածուխի արդիւնաբերութեան արժեթղթերը պակասեցին 5%-ով, որ կազմում է 100 միլիօն մարկի կորուստ, պետական ռենտան պակասեց 1%-ով, այսինքն 150 միլիօն կորուստ. բօրսայի կորուստը ուրիշ արժեթղթերի վրա 100 միլիօնից աւելի է գնահատվում, այսինքն ընդհանուր կորուստը արդէն 350 միլիօնից անցել է։ Գերմանական մամուլի մէջ մատնացոյց է արվում, որ կուրսի աւելի խիստ անկման առաջն առնվեց նրանով, որ գանձարանը ծածուկ կերպով սկսեց գնել նրանց։ Ճգնաժամի առաջացրած մի քանի մանր սնանկութիւնները աննկատելի կանցնէին, եթէ դրանց չը միանային խոշոր սնանկութիւնները։ Դադարեցրեց վճարումները Վեստֆալեան գրաւական բանկը. նոյն վիճակին ենթարկվեց գերմանական երկրագործական փոխադարձ կոմիտէտի բանկը. սնանկացան և մի քանի այլ խոշոր բանկեր. փողը թանգանում է։ Բեռլինում, Համբուրգում և այլ կենտրոններում մի շարք խոշոր ձեռնարկութիւններ դադարեցրին վճարումները։

Ի հարկէ չէ կարելի ասել, որ կրիզիսը երկար կը շարունակվի, բայց փաստը փաստ է մնում։ Եւ գերմանական մամուլի մեծամասնութիւնը մեղադրում է պատերազմի դրդողներին և ապացուցանում է, որ կառավարչական յարձակողական քաղաքականութիւնը այժմ, երբ պարզվեցին նրա հետևանքները, կտրականապէս դատապարտվում է մասսայի կողմից և այդ պատճառով պէտք է ընդունի այլ, աւելի հաշտ բնաւորութիւն։ («Р. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԵԿՈՒՑՈՒՄ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Սեպտ. 6-ի երեկոյեան Բօրսայի դահլիճում լի հասարակութեան առաջ բացվեց հասարակական ակումբի սեզոնը իշխ. Գ. Մ. Թումանովի զեկուցումով, որը վերաբերում էր կովկասեան համալսարանի խնդրին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ 1910—1911 Թ. ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ ԷԿՍՈՒՐՍԻԱՆ

XII*)

Յաջորդ օրը առաւօտեան ժամը 4-ին հազիւ զարթնեցինք կարճատև քնից. մտադիր էինք կանուխ մեկնել Մեծ-Ղարաքիլիսա։ Մեր ընկերոջ հայրը, Մարտիրոս Կոծինեան, առատօրէն հիւրասիրում է մեզ. պատշգամբում պատրաստում է սեղան, զարդարում է այն զանազան ուտելիքներով, գցում են երկու ինքնաեռ. ժամը 5½-ին մենք հազիւ վերջացնում ենք մեր «նախաճաշը» և անկեղծ շնորհակալութիւն յայտնում ընկերոջ հօրը։

Արևը նոր էր ծագում, գիւղացիք նոր էին դուրս գալիս տներից և հետաքրքրութեամբ նայում էին Մարտիրոսի բակը, ուր մենք էինք գտնվում. ընկերները սկսում են երգել. նրանց երգը լսելու համար աւելի շատ գիւղացիներ են դուրս գալիս և մօտենում մեզ. ընկերները սկսում են «Արաքսի արտասուքը». մենք ժողովում ենք մեր իրերը և դուրս գալիս բակից. մեզ ճանապարհ դնելու համար Մարտիրոսը գալիս է մեզ հետ, և մենք դանդաղ անցնում ենք գիւղի միջով, կտուրներին կանգնած հետաքրքիրների մօտով։ Գիւղի մօտակայ լեռների վրա երևում են ձեան մնացորդներ. սարերի վրա՝ նկատվում է նոսր անտառը, որ շատ տարբեր է Դիլիջանի անտառից. այստեղ 6460 ոտնաչափ է բարձրութիւնը, իսկ Դիլիջանում՝ 4260. Համզաչիմանը բարձրութեամբ հաւասար է Սևանայ լճի բարձրութեանը. տարբերութիւնը միայն 100 ոտնաչափ է։

Անտառը այստեղ չունի այն նշանակութիւնը, ինչ որ ունի Դիլիջանում, Մեծ-Ղարաքիլիսայում և Համամլիում, որտեղ փայտագործութեամբ շատերն են պարապում։

Համզաչիմանցիք պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, մշակում լեռնային շրջաններին յատուկ բոլոր հացահատիկները։ Խոտաբուծութիւնը,—սեղմ իմաստով—այստեղ չը կայ. գիւղացիք խոտ ստանում են «չայիրներից» և «հարամներից». «չայիրները» բնաւ չեն մշակում, հողը չեն պարարտացնում, միայն գետնի երեսին գտնվող քարերն են մաքրում և «չայիրներ» անում, որ խոտը քաղելիս գերանդին չը փչանայ. «հարամներ» կոչվում են այն արտերը, որոնք չեն ցանվում և թողնվում են անմշակ մի տարի, որպէս զի «հողը հանգստանայ». բայց հողը չէ «հանգստանում» և ծլում է խոտ, որն և քաղում են գիւղացիք։ Այնպէս որ՝ խոտաբուծութիւն, խոտ ցանել՝ չը կայ այստեղ։

Պապերից և հայրերից սովորած միջոցներով գիւղացիք միայն քչփորում են երկիրը և բաւականանում նրա նուազ արգասիքներով. և այս կոչվում է գործելը երկիրի, աշխատանք հողի համար…

Ճանապարհին քայլելիս մենք երկար խօսակցում ենք մեզ հիւրասիրող Մարտիրոսի հետ. նա շատ դժգոհ էր իր համագիւղացիներից. նրանց արատները և պակասութիւնները Մարտիրոսը անխնայ խարազանել է, հրապարակ է հանել զեղծումներ, մամուլի բաժին է դարձրել իր հայրենի գիւղի ցաւերը։ Այս բոլորի համար համագիւղացի իշխանները և վաշխառուները նրան հալածել են և հալածում են. բայց Մարտիրոսը շատ խիզախ մարդ է. նա չէ վախենում զօրաւորների սպառնալիքներից. մոլեռանդ քրիստոնեայ լինելով՝ նա հաւատում է արդարութեան յաղթանակին և վերջնական դատաստանի հզօրութեանը։ Երկար էր խօսում Մարտիրոսը. իր ճառերը նա համեմում էր Աւետարանից երկար քաղուածներ անգիր ասելով, հին ասացուածներով, առակներով։ Միաժամանակ նա լաւ հեքիաթաբան էր, առասպելների կենդանի ժողովածու. հետաքրքրական մարդ ամեն կողմից. նա մի քանի անգամ բանտ է մտել, և, իր խօսքերով, միշտ եղել է արդար…

Նրա հետ խօսելով մենք բաւական երկար ճանապարհ ենք անցնում։ Համոզում ենք նրան, որ նա վերադառնայ, թէ չէ՝ դժուար կը լինի յետոյ միայնակ տասն վերստ անցնելը. Նա չէր ուզում մեզանից բաժանվել. ուզում էր ասել, արտայայտել ամեն ինչ, բոլորը, ինչ որ ինքը գիտէր. նա վստահ էր, որ իրան լսողները հաճոյքով են ընդունում նրա պատմութիւնները. և այդ նրա համար մեծ խրախուսանք և վարձատրութիւն էր. բայց նա վերջապէս բարի երթ է մաղթում մեզ, մի քանիսի հետ համբուրվում և վերադառնում Համզաչիման։

Մենք ուշադրութիւն ենք դարձնում խճուղու քանդված մասերի վրա. մի քանի կամուրջներ ոչնչացված էին, ճանապարհի վրա ընկած էին ահագին քարեր։ Այդ բոլորը ինչ-որ արտասովոր երևոյթներ էին. մենք իմանում ենք, որ մեզանից երկու շաբաթ առաջ, յունիսի 6-ին, Համզաչիմանից մինչև Մեծ-Ղարաքիլիսա տեղացել է սաստիկ անձրև, սարերից ջուրը հեղեղի պէս հոսել է փոս տեղերը, ճանապարհին գտնվող ժայռերը տեղահան է արել և ցած գլորել, քանդել է կամուրջները, փչացրել է խճուղին։ Մեզ պատմեցին, որ խճուղու վրա կանգնած բեռնաւորված սայլերը ջուրը քշել տարել, գցել է փոսերը. եզների կէսը խեղդվել է, սայլերը ջարդվել են, բայց մարդիկ չեն վնասվել։ Այդ հեղեղի հասցրած վնասների չնչին մնացորդները միայն մենք տեսանք։ Խճուղին տեղ-տեղ արդէն կարգի էր բերված, կամուրջները սկսում էին կառուցանել։ Ոչ մի նախազգուշացման միջոց չը կայ այստեղ այդպիսի արհաւիրքների առաջն առնելու համար։ Որքան լաւ կը լինէր, եթէ ազգաբնակութիւնը մի երկու ժամ առաջ իմանար գալիք դժբաղդութիւնների մասին։ Օդերևութաբանական կայարանները ժողովրդին մատչելի և կատարելագործված պարագաներով ահագին օգուտ կարող են տալ, ծառայելով ժողովրդի պէտքերին, զգուշացնելով նրան մթնոլորտի փոփոխութեան հետևանքների մասին։

Բայց ո՞րտեղ են այդ կայարանները. եղածները ներկայացնում են կղզիացած պաշտօնական արխիւներ, թափթփված մատեաններով և ընդարձակ գրագրութեամբ։ Գիւղացիութիւնը գաղափար չունի այդ կայարանների նպատակի մասին։ Այժմեան օդերևութաբանական կայարանները օրը երեք անգամ դիտողութիւններ են անում և մէկ անգամ հեռագրում են կենտրոնին եղանակի մասին. և այդքանով ամփոփվում է օդերևութաբանական կայարանների ամբողջ գործունէութիւնը…

Համզաչիմանի և Մեծ-Ղարաքիլիսայի միջև են գտնվում Վօսկրեսենօվկա և Վարդանլու գիւղերը. վերջին գիւղում ապրում են հայեր և թուրքեր. գիւղը բաւական մեծ է։ Վարդանլուից քիչ ներքև հոսում է մի գետակ, որից մինչև Մեծ-Ղարաքիլիսա մէկ վերստ է։ Կէս ժամի չափ մենք կանգ ենք առնում այդ առուի ափին, հանգստանում ենք, լուանում ոտներս, գուլպաներս և կեղտոտ թաշկինակներս։

XIII

Մեծ-Ղարաքիլիսա հասանք առաւօտեան

---

*) Տես «Մշակ» №№ 134, 143, 144, 149, 150, 151, 152 և 195.

Իշխ. Գ. Մ. Թումանով մանրամասն ծանօթացրեց ներկայ եղողներին այն ընթացքի հետ, որ ստացել է կովկասեան ապագայ բարձրագոյն դպրոցի հարցը Պետերբուրգի բարձր շրջաններում, նրա խորհրդածութիւնների ժամանակ, երբ այդ հարցը, չը նայած, ըստ երևոյթին, բոլոր բարեյաջող պայմաններին, վերջ ի վերջոյ տապալվել է. տապալման գործին որպէս հիմք ծառայել են ա) քաղաքական բնաւորութիւն կրող միտումներ (համալսարանը կը պատուաստի սեպարատիզմ) և բ) նիւթական միջոցների ոչ բաւարար լինելը: Քննելով երկրի դրութիւնը մի քանի ամիս առաջ և այժմ, գտնում է, որ ներկայումս բարձրագոյն դպրոց բացելու հարցը գտնվում է աւելի առաջադրութեան մէջ, քանի որ Պետական Դուման իր մի ցանկութեամբ միաձայն արտայայտվել է, որ կովկասեան համալսարանը պէտք է բացվի ընդհանուր հիմունքներով՝ այսինքն պետութեան միջոցներով: Աչքի առաջ ունենալով այդ՝ իշխանը հարցնում է. ինչ ընթացք պէտք է տան այժմ այդ խնդրին տեղական մարդիկ, հասարակական, քաղաքային հաստատութիւնները, եթէ միայն անկեղծ ցանկանում են, որ այդ խնդիրը դրական լուծում ստանայ հոկտեմբերին, երբ մինիստրների խորհրդում քննվելու է կովկասեան համալսարանի հարցը:

Ներկայ եղողներից կարծիքներ յայտնեցին շատերը. ի միջի այլոց մեծ տպաւորութիւն թողեց Պետական Դումայի անդամ, այժմ Թիֆլիսում հիւր գտնվող Ա. Ի. Շինգարեովի ճառը, որը ընդունվեց բուռն և երկարատև ծափահարութիւններով: Պատգամաւոր Շինգարեով գտնում է, որ բարձրագոյն դպրոցը ունի պետական նշանակութիւն. նա համապետական անհրաժեշտութիւն է, ուստի և եթէ ինքը յարուցել է և պաշտպանել է այդ հարցը Պետական Դումայում, այդ արել է որպէս ռուս ազգի պատգամաւոր, քաջ գիտակցելով որ բարձրագոյն դպրոցը չէ կարող և չը պէտք է քննութեան առնվի որևէ քաղաքական դիտումներով, այլ որպէս պետական անհրաժեշտութիւն. կանգնելով ահա այդ տեսակէտի վրա, նա կարծում է, որ ռուս քաղաքացիք, ուր և նրանք գտնվեն, երբ յարուցանում են կառավարութեան առաջ սրա նման միջնորդութիւններ, նրանք պէտք է առաջ քաշեն ոչ այնքան տեղական կարիքների բաւարարման խնդիրը, որքան համապետական, որ չէ կարող և իրաւունք չունի չը լսել և չը բաւարարել կառավարութիւնը. ահա թէ ինչու նա հրաւիրում է կովկասցիներին իրանց ձայնը լսեցնել տալ այդ ոգով և այդ ուղղութեամբ, քանի որ կառավարութեան համար պետութեան սահմանների մէջ չեն կարող և չը պէտք է լինեն սիրելի և ոչ սիրելի քաղաքացիներ, փայփայվող և ոչ փայփայվող շրջաններ, երկիրներ, նահանգներ և այլն:

Քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեան, որպէս համալսարանական խորհրդակցութեանը Պետերբուրգում մասնակցող անդամ, յայտնեց, որ նրա կարծիքով միջոցների հարցը երկրորդական, նոյնիսկ երրորդական է բարձր շրջանների համար, այլ նրանք ղեկավարվում են ուրիշ մոտիվներով, որոնց մէջ սեպարատիստական կասկածները մեր վերաբերմամբ առաջնակարգ դեր են կատարում. ահա թէ ինչու համոզելու որպէս արգումենտացիա պէտք է ծառայեն այն փաստերը, թէ ինչ շահ կարող են ստանալ կովկասեան բարձրագոյն դպրոցից ինքը Ռուսաստանը, նրա Կովկասում գտնված զօրքը, Կովկասում եղած ռուս գաղթականութիւնը. ուստի նա գտնում է, որ մինիստրների խորհրդին պէտք է ներկայացնել այդ հարցերը պարզաբանող բոլոր նիւթերն ու պատճառաբանութիւնները:

Ա. Բ. Եւանգուլեանը, խօսելով կովկասեան սեպարատիզմի մասին, յայտնում է այն միտքը, որ կովկասեան ազգերի առ Ռուսաստան տածած սէրը կախված է կառավարութեան տածած սիրուց դէպի կովկասցիները. «Եթէ մեզ սիրում են և յարգում ու նայում մեզ վրա հաւասար աչքերով, մենք ևս նոյն դրամով ենք հատուցանում. իսկ երբ մեզ արհամարհում, հալածում և աչքից հեռու են պահում, մենք ևս բնականաբար նոյն կերպ ենք հատուցանում: Գալով համալսարանին անհրաժեշտ պետական նպաստին, պետական գանձարանում եղած գումարները միմիայն Ռուսաստանի ներքին նահանգներինը չեն, այլ և Անդրկովկասինը, որի նաւթն ու երկաթուղին միայն տասնեակ միլիոններ են մտցնում այդ գանձարանը, իսկ մեր միջոցներից ժողովված զեմսկի տուրքի $^{1}/_{3}$-ը գնում է զեմսկի պահնորդութեան անմիտ և անօգուտ ինստիտուտի պահպանման վրա, որի վերացման մասին պնդել է նոյն ինքը Կովկասի Փոխարքան»:

Ներկայ եղողներից մի քանիսը կարծում են, որ յոյս չը պէտք է դնել կառավարութեան տուած նպաստի վրա և դրանով պայմանաւորել կովկասեան համալսարանի՝ գոնէ նրա մի երկու ֆակուլտէտի՝ բացումը, որ եղած և խոստացված գումարները բոլորովին բաւական են սկիզբ դնելու առ այժմ մի երկու ֆակուլտէտների. թող աւարտողները այժմ չունենան պետական ծառայութեան իրաւունքներ, այլ քննութիւն տան կայսերական համալսարաններում: Ոմանք պնդում էին, որ պէտք է դիմումներ անի ինքը ազգաբնակութիւնը, պէտք է նա գիտակցի բարձրագոյն դպրոցի իրան անհրաժեշտ լինելը և իր միջոցներով լրացնի պակասը:

Ա. Ի. Շինգարեով, վերջին անգամ խօսք առնելով, ուրախութիւն է յայտնում, որ ինքը, լինելով Կովկասում, հնարաւորութիւն ունի ծանօթանալու Կովկասի հետ, նրան հետաքրքրող հարցերի, հասարակութեան տրամադրութեան հետ, և խնդրում է, որ բոլոր այն կարծիքները, որոնք յայտնվում են կովկասեան հրատապ հարցերի շուրջը այստեղ՝ երկրում, այդ բոլորը որպէս նիւթ ժողովվեն և ուղարկվեն Պետական Դումա ռուս պատգամաւորներին, որոնք միայն հնարաւորութիւն ունեն լսեցնել տալու կառավարութեանը ընդհանուր հայրենիքի մի մեծ և հրաշալի մասի կարիքները, որոնց բաւարարութեամբ միայն կամրանայ և կառաջադիմի թէ պետութիւնը որպէս ամբողջութիւն և թէ կը բարգաւաճի Կովկասը որպէս Ռուսաստանի անբաժան մի մաս:

Երկարատև ծափահարութեան տակ աւարտեց Շինգարեով իր ճառը, որը ներկայ եղողների վրա թողեց խորը և մեծ տպաւորութիւն. դրանով և աւարտվեց այս կարևոր հարցի շուրջ ծագած մտքերի կենդանի փոխանակութիւնը:

Ի դէպ պէտք է ասել, որ Վորոնեժի պատգամաւոր, Պետական երկրորդ և երրորդ Դումայի անդամ, սահմ.-ռամկավարների կուսակցութեան գործունեայ և գնահատելի անդամ Ա. Ի. Շինգարեով խօսում է շատ պարզ, լսելի ձայնով, շեշտերը տըպաւորիչ են, խօսուածքի ձևը գրաւիչ և հռետորական, բովանդակութիւնը մտածված, զգացմունքները անկեղծ. իսկոյն երեւում է, որ ձեր առաջ կանգնած է ժամանակակից ռուս քաղաքացին, այս բառիս ամենալայն և ազնիւ իմաստով:

Ա. Աթանասեան

ԽՈՀԵՐ ԵՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

V *)

Եզրակացութիւն: Նախ և առաջ հարկաւոր է բուն երկրի ժողովրդի տնտեսական բարեկեցութեան և մտաւոր զարգացման մասին մտածել, որպէսզի նա հեռաւոր վայրեր չը գաղթի: Դպրոցներին այնպիսի ուղղութիւն և բովանդակութիւն տալ, որ նրանցից դուրս եկողը իր ծննդավայրում, հողում մնայ ու գիւղից չը փախչի: Սակայն դժբաղդաբար պիտի խոստովանել, որ կարծես մեր ժողովրդի մէջ հակումը դէպի արտագաղթը ժառանգական բնաւորութիւն է ստացել: Գաղթում են աւելի մեծագումար հարստութիւն ձեռք բերելու, քան թէ կարիքից ստիպված: Այդ փաստ է: Երկրորդ՝ մի այլ ժառանգական ախտ, որ ունի հայը, այդ անշարժ սեփականութիւն ունենալու ախտն է: Ուր գնան հայերը, ահագին շինութիւններ պիտի կառուցանեն: Էլ չեն մտածում, թէ գուցէ ապագայում, այդ օտար երկրում անկարելի կը լինի ապահով ապրել. հէնց ի նկատի առնենք հայ-թուրքական անմիտ ընդհարումը նորերում: Մարդիկ, օրինակ, Անդրկովկասում՝ տներ են կառուցանում մի օտար ցեղի մէջ, բնակչութեան ամենաչնչին տոկոսը կազմելով: Ամեն բանում հեռատեսութիւն է հարկաւոր, մանաւանդ գաղթականութեան գործում օտար վայրերում: Իսկ քաղաքական հեռատեսութիւնը պահանջում է ապագայի մասին մտածել լրջօրէն, հաստատուն կերպով տեղաւորվել այնտեղ, ուր վտանգ չէ կարող առաջանալ. սակայն այդ ապահովութիւնը որտեղ կարելի է մշտապէս ունենալ, այդ է մտածելու հարցը: Ապա ուրեմն գաղթականը այդ բոլոր հեռանկարը ի նկատի ունենալով, իր հարստութիւնը չը պիտի վատնէ անշարժ կալուածների վրա հեռաւոր վայրերում: Նա իրան պէտք է ժամանակաւոր հիւր համարի և իր աշխատանքը շարժական կայքի տեսակէտով պիտի ունենայ, ինչպէս անում է հրէան:

Իսկ եղած գաղութների առաջ երկու ելք կայ. կամ ձուլվել, անյայտանալ իբրև հայ ազգի բեկոր, կամ կենդանի մնալ: Վերջինը այն ժամանակ կարող է լինել, եթէ նա սերտօրէն կապվի կրօնով ու լեզուով մայր երկրի համասեռ ազգաբնակութեան հետ, սրբութիւնների հետ, թէև այնքան էլ դիւրին չէ: Մեր հարուստ գաղութները թող Եգիպտոսի հայութեան օրինակին հետևեն, ուր կազմվել է մի համակրելի կուլտուրական ընկերութիւն, հովանաւորութեամբ Պօղոս փաշա Նուպարեանի, որը ամեն ճիգ թափում է բուն երկրի ժողովրդի նիւթական բարեկեցութեան և լուսաւորութեան համար, ինչպէս նաև Կովկասեան Հայոց Բարեգ. Ընկերութիւնը, Բագուի Կուլտուրական Միութիւնը, Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութիւնը, Պետերբուրգի Եկեղեցական Խորհուրդը և այլն: Թող մեր մէջ բազմանան Մանթաշեաններ, Ղուկասեաններ, Ժամհարեաններ, Նուպարեաններ եայլն, եայլն, որոնք մտածեն երկրի ազգաբնակութեան համար, Մայր Աթոռի պայծառութեան և բարձրութեան համար, որպէսզի նա ամենուրեք հմայք ու հռչակ ստանայ: Ահա այդ ժամանակ ազգի թէ ամբողջութիւնը և թէ նրա բեկորները կենդանի կը մնան՝ տոգորված մի վերին աստիճանի հզօրագոյն ֆակտորով, որը կոչվում է՝ իդէալիզմ, իսկ վերջինս, ինչպէս ապացուցեց պրոֆ. Եարօցկին իր մի աշխատութեան մէջ, որպէս բնախօսական ֆակտոր՝ թէ անհատների և թէ հասարակութիւնների համար, ահագին կենսական նշանակութիւն ունի: Մինչև որ մեր մէջ ազգային և հասարակական իդէալիզմ չը լինի, ինչպէս ընիկների և նոյնպէս էլ գաղութների հայերի մէջ, այլ միայն լոկ եսականութիւն, մամոնայապաշտութիւն և այլն, դժուար է յուսալ բուն երկրի և գաղութների հայ ազգաբնակութեան մէջ միութիւն, համերաշխութիւն և համագործակցութիւն կազմելու և կապակցվելու: Գաղութների ժողովուրդը աւելի հարուստ, ինտելիգենտ լինելով՝ աւելի կարող է թէ մտաւորապէս և նիւթապէս, իրանց ինկելի նախնիքների նման, օգնութեան ձեռք կարկառել բուն երկրի ազգաբնակութեանը, որը և աղէտ է, և աղքատ, և ամեն կողմով դժբաղդ, բայց ամուր կպած մայր-երկրին, նախնեաց յիշատակներին, աննկարագրելի զոհեր է տալիս, ուստի և նա ամենքի կողմից արժանի է ամենալայն հոգատարութեան:

Ահա այդ բարոյական պարտականութիւնը պիտի լինի այն ազգային իդէալիզմը, որի մասին մի քիչ վերը յիշեցինք, որով և վերջացնում ենք մեր ասելիքը:

բժ. Բ. Աղասարեան

---

*) Տես «Մշակ» №№ 192, 193, 194 և 195.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կաթող. պատուիրակային ընտրութեան նախօրեակին

Շուշի, 2 սեպտեմբերի

Ինչպէս լսում ենք, կաթողիկոսական ընտրութեան համար շուտով քաղաքիս եկեղեցիներում կատարվելու են պատուիրակային ընտրութիւններ: Եկեղեցիներում ընտրված պատուիրակները յետոյ կը գումարվեն թեմի քաղաքներից և գաւառներից եկած պատուիրակների հետ և միասին ժողով կազմելով կընտրեն մի թեմ. պատգամաւոր, որը իբրև Ղարաբաղի թեմի ներկայացուցիչ ժամանակին կը մասնակցէ Էջմիածնում ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը:

Ամենավճռական քայլը, եթէ կամենաք, դա սկզբնական ընտրութիւնն է. այդ սկզբնական ընտրութիւնները մեծ նշանակութիւն ունեն, որովհետև նրանցից և թեմի ուրիշ կողմերում ընտրված եկեղեցական պատուիրակներից կախված կը լինի այս կամ այն ուղղութեան թեմ. պատգամաւորի ընտրութիւնը:

Այդ պատճառով կարևոր ենք համարում նկատել, որ եկեղեցական ընտրողները նախապէս պէտք է որոշեն և իմանան, որ ընտրելով իւրաքանչիւր եկեղեցուց երկու-երկու հոգի եկեղեցական պատուիրակներ, նայելով թէ ինչ տեսակ մարդիկ կընտրեն, նրանք դրանով արդէն որոշում են և թեմական պատգամաւորի ընտրութիւնը, նրա ինչ ուղղութեան պատկանելը և այլն:

Քաղաքացիներ, ընտրողական ժողովի իւրաքանչիւր մի անդամ պարտաւոր է յիշել, որ մեր մեռելութեան հասած ազգային հիմնարկութիւնները կարօտով սպասում են վերանորոգչական թարմ գործունէութեան: Գործը, որի համար կատարվում են ներկայ ընտրութիւնները, լուրջ է և նրան աջողութեամբ գլուխ բերելու համար անհրաժեշտ է մի կողմ դնել կողմնակի հաշիւներ և դրդումներ՝ աչքի առաջ ունենալով միայն գաղափարը և գործը: Ընտրողներ, եթէ դուք ընդունակ էք մի օր արտափայլեցնել ձեր մէջ ազգի զգացմունքը, ապա ուրեմն գնացէք ընտրութիւններին և տուէք ձեր քուէն այն անձանց, որոնց դուք կը ցանկանայիք լիազօրութիւն տալ ընտրելու Ղարաբաղի թեմի կողմից պատգամաւոր: Տալով ձեր քուէն վստահելի անձանց, դուք նրանց միջոցով իրագործում էք ձեր կամքը, ձեր ցանկութիւնները:

Պօղ. Զաքարեան

Առաջին թռիչք

Նովօրօսսիյսկ, 31 օգոստոսի

Օգոստոսի 29-ին տեղիս Պրիվօզ կոչված հրապարակում, աւիատոր Ա. Կուզմինսկին կատարեց առաջին թռիչքը Նովօրօսսիյսկում (այն այժմեանից պատմական Բլէրիօյի ապարատով, որով Վասիլևը կատարում էր թռիչք Պետերբուրգ-Մօսկվա): Ժամը 5-ից անց 10 րոպէ՝ Կուզմինսկին, հագած աւիատորի շագանակագոյն հագուստը, ներկայացաւ հազարաւոր ամբոխին. նախ Կուզմինսկին մի քանի խօսքով բացատրեց ապարատի կազմը. իսկ ժամը 6-ին աւիատորը բարձրացաւ ու նստեց իր թիթեռնիկի վրա: Ժողովուրդը ալեկոծված դրութեան մէջ սպասում է: Մոտորի առաջին փորձը կատարելուց (մոտորը մէկ րոպէում տալիս 1200 շրջան) բաց թողեց ամբողջ ոյժը ու սկսեց բարձրանալ: Մէկ րոպէի չափ օդում մնալով՝ ապարատը վայր ընկաւ գետին 8 մէտր բարձրութիւնից: Աւիատորը անվնաս է, իսկ ապարատի պրօպէլլերը, ակերը և առջևի ամբողջ փայտեայ մասերը ջարդվեցին:

Վնասը թեթև է և պարզվեց, որ կարող են այստեղ էլ ուղղել: Վայր ընկնելու պատճառը վերագրում են ապարատի ղեկը շուռ տալուն:

Համօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Աստուածածնի տօնի պատճառով «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի շաբաթ, սեպտեմբերի 10-ին:

◆ Կովկասի Փոխարքայի մոտ պաշտօնական ընդունելութիւն կը լինի շաբաթ օրը:

◆ Թիֆլիսի զանազան կառավարական հաստատութիւններում կատարվում են հոգեհանգիստներ հանգուցեալ Ստոլիպինի յիշատակին:

◆ Թիֆլիսի թեմի առաջնորդի պաշտօնակատար Եփրեմ եպիսկոպոս անցեալ օրը Կարապետ եպիսկոպոսին 200 րուբլի ուղարկեց Ղարադաղի վնասված հայերի օգտին:

◆ Թիֆլիսի դումայական ընտրութիւնների առիթով շարունակվում են նախընտրական խորհրդակցութիւնները: Կազմակերպվել են երեք խմբեր, որոնք և պայքար են մղում միմեանց դէմ. առանձնապէս շատ է աշխատում վրացիների խումբը:

◆ Վրաց հանգուցեալ դերասանուհի Գաբունիա-Ծագարելիի գերեզմանի վրա մահարձան կը կանգնեցվի հոկտեմբերի կէսերին:

◆ Երէկ, ցերեկվայ ժ. 12-ին, երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօրի դիւանատանը կատարվեց հոգեհանգիստ Ստոլիպինի համար: Հոգեհանգստին ներկայ էին թէ այդ դիւանի և թէ առհասարակ երկրագործութեան վարչութեան բոլոր պաշտօնեաները:

◆ Կովկասեան տնայնագործական կոմիտէտի անդամ-գործավար Յարութիւն Փիրալեան ծառայական գործերով ուղարկվում է Պետերբուրգ:

◆ Վերադարձաւ արձակուրդից Թիֆլիսի քաղաքագլխի անձնափոխանորդ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը:

◆ Թիֆլիսի մսավաճառները իրանց ներկայացուցչի միջոցով խնդրում են նահանգապետից վերաքննել մսի սակագինը, որովհետև ներկայ հանգամանքներում իրանց ձեռնտու չէ միսը վաճառել 14 և 11 կոպէկով: Մսագործները գանգատվում են, որ քաղաքի մի քանի մասերում կարանտիններ են նշանակված գաւառի եղջիւրաւոր անասունների մէջ երևացած ժանտախտի պատճառով: Այնպէս որ վերջին ժամանակներս շատ քիչ թւով անասուն է ներմուծվում քաղաք: Մսավաճառների յիշեալ միջնորդութիւնը կը քննվի քաղաքային դումայական տնտեսական մասնաժողովի մէջ:

◆ Անցեալ օրը Թիֆլիսի նահանգական դատարանում քննվեց մի ժամանակ «մօդա» եկած ծննդաբերութեան «կասսաների» գործերից մինը: Մեղադրվում էին չորս հոգի՝ Ադամեան, Բէգբուջանեան, Սխուլուկիա և Աւետիսեան: Բոլորին էլ դատարանը զրկելով իրաւունքներից դատապարտեց ութ ամսով ամեն մինին բանտարկութեան: Հետաքրքրականն այն է, որ յիշեալ անձանց «կասսան» շրջանառութիւն էր ունեցել 48,000 րուբլի, որից միայն 6000 ր. տրված է եղել այսպէս ասած երեխայ բերողներին, իսկ մնացածը Աստուած գիտէ թէ ուր է անյայտացել:

◆ Ինչպէս երևում է Թիֆլիսի ոստիկանապետի տեղեկութիւնից, քաղաքում անցեալ ամսվայ ընթացքում եղել են 86 յանցագործութիւններ:

◆ Թիֆլիս է գալիս բանտային գլխաւոր տեսուչ Գոմալիցկին՝ քննելու տեղիս բանտային տները:

◆ Մեզ հաղորդում են, թէ Պետերբուրգից մասնաւոր հեռագրով լուր է ստացված Թիֆլիսում, որ «Դաշնակցութիւն» կուսակցութեան դատը կը լինի Պետերբուրգում, այլ ոչ Նովօչերկասկում: Կովկասի անկիւններում ապրող

ժամը 10-ին. կանգ առանք Խօրէն ա. ք. Խանզատեանի պարտիզում: Տէր-հօր որդիները մեզ սիրալիր ընդունեցին, իսկոյն թէյ պատրաստեցին և պարտէզի մէջ, մեղուների մօտ, սեղան փռեցին: Խանզատեանները մօտ 80 փեթակ ունեն, բոլորը նոր ձևի: Նրանց մեղուները դեռ չէին «ձագ տուել», միւս փեթականոցներում ևս այդ դեռ չը կար, մինչդեռ Դիլիջանում, ինչպէս տեսանք, փեթակները արդէն երկրորդվում էին: Նախաճաշից յետոյ շնորհակալութիւն յայտնեցինք Խանզատեան եղբայրներին և քաշվեցինք մեզ համար յատկացված սենեակները՝ օրիորդաց դպրոցի ընդարձակ դասարանները: Ընկերները պառկում են հանգստանալու. մի քանիսը անցեալ գիշերվայ պակասը լրացնելու համար ննջում են: Ճաշից յետոյ, երբ շոգը նուաղեց, մենք դուրս եկանք գիւղը շրջելու: Այս գիւղը կամաց-կամաց դառնում է գիւղաքաղաք: Փողոցները, տների ձևը, երկյարկանի և եռյարկանի շինութիւնները, բազմաթիւ խանութները՝ Մեծ-Ղարաքիլիսան մօտեցնում են քաղաքներին, նմանեցնում են Ալէքսանդրօպօլի նման գաւառական քաղաքի: Պատմում են, որ 15—20 տարի առաջ Մեծ-Ղարաքիլիսան մի հասարակ գիւղ է եղել: Երկաթուղագծին մօտ լինելը դարձրել է այս գիւղը մի ամբողջ կենտրոն, խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւններով: Այս գիւղը կոչվում է նաև ամարանոց: Անդրկովկասի զանազան քաղաքներից յունիս, յուլիս և օգոստոս ամիսները Ղարաքիլիսա են գալիս մանր բուրժուաները, միջակ վաճառականներ և յոգնած ուսուցիչներ: Գալիս են հանգստանալու, կազդուրվելու և թարմանալու: Չը գիտեմ այդ աջողվում է Ղարաքիլիսայում ամարողներին: Առաւօտները սրանք գնում են գիւղից դուրս գտնվող անտառը, ուր և մնում են մինչև երեկոյ. երեկոյեան լցվում են «րոտոնդը», ծանօթներ են որոնում, խօսակիցներ են գտնում, եթէ երեկոյթ կայ կամ ներկայացում՝ մտնում են թատերասրահ: Ընթերցասէրները մտնում են թատերասրահին կպած փոքր ընթերցարանը և օրաթերթերն են աչքի անցկացնում, ապա զբօսնում են րոտոնդի շուրջը մինչև ուշ գիշեր:

Ահա ամարողների հանգստանալը, կազդուրվելը և թարմանալը:

Մենք մի երեկոյ միայն մնացինք Ղարաքիլիսայում, դիտեցինք ամարողների այս կեանքը և սոսկալի տաղտուկ զգացինք: Դժուար է թւում մեզ այդտեղ հանգստանալ, կազդուրվել և թարմանալ. փողոցները՝ փոշոտ. բաւական է մի քամի, և օդը փոշով կը լցվի: Ցերեկները անտանելի շոգ է լինում. երեկոյեան և գիշերը րոտոնդում դժուար է հանգստանալ, որովհետև անպարկեշտ տեսարաններ են միշտ կրկնվում այդտեղ: Անտառը հեռու է գիւղից, գիւղի դիրքը փոս է, խոնաւ: Ուրիշ բան է Դիլիջանը...

Մեծ Ղարաքիլիսայից արշաւախումբը երկաթուղով պէտք է գնար Սանահին և Հաղբատ, իսկ այնտեղից պիտի վերադառնար Թիֆլիս. ընտանեկան մի տօնախմբութեան պատճառով ինձ կանչում են Կարս, և ես չեմ կարողանում մեր այս էկսկուրսիայի պատմութիւնը մինչև վերջը տանել: Նամակներով ես խնդրեցի ընկերներից մի քանիսին շարունակութեան մասին տալ տեղեկութիւններ և վերջացնել իմ այս շարադրութիւնս. բայց ընկերներս, հազիւ ազատված դպրոցական կեանքից, ծուլացան մի երկու ժամ նուիրել այս աշխատանքի համար, թէև խոստացան. դրա համար և այստեղ վերջացնում եմ իմ շարադրութիւնս: Որպէս վերջաբան թոյլ եմ տալիս ինձ մի քանի խօսքերով բնորոշել մեր էկսկուրսիան և նրա տուած արդիւնքները:

Անառաջնորդ մեր էկսկուրսիան տեւեց 10 օր, յունիսի 9-ից մինչև 19-ը: Աղստաֆայի վրայով խումբը անցաւ Դիլիջան, այցելեց Սևանայ մենաստանը, Դիլիջանից գիշերով մեկնեց Մեծ-Ղարաքիլիսա, ապա Սանահին և Հաղբատ: Արշաւախմբի դրամական միջոցները՝ 136 րուբլի՝ լիուլի բաւականացրին. ոչ մի տեղ մենք նեղութիւն չը քաշեցինք: Սևանայ մենաստանում մեզ սիրով ընդունեցին. Համզաչիմանում և Մեծ Ղարաքիլիսայում լաւ հիւրասիրեցին: Դժբաղդ դէպքերի մենք չը հանդիպեցինք: Տասն օրվայ ընթացքում մենք զգացինք իսկական ուրախութիւն, ընկերական զբօսանքի քաղցրութիւնը, ըմբոշխնեցինք Դիլիջանի բնութեան գեղեցկութիւնը, ճանաչեցինք միմեանց: Սևանայ կղզում տեղի ունեցած միջնադէպը (տես VIII գլ. ժԱ. հատուած) յստակօրէն ցոյց տուեց մի քանի ընկերների ամբողջ էութիւնը, նրանց հոգին: Էկսկուրսիայից յետոյ մի քանի ընկերներ նամակներով յայտնում են, որ «միայն այժմ են հասկանում» և գնահատում իրանց ընկերների արժանիքը, որ «միայն նոր են ճանաչում միմեանց», 6—7 տարվայ աշակերտական կեանքը փոխադարձ ճանաչողութեան համար նրանց ոչինչ չէր տուել. 10 օր միասին ճանապարհորդելը բաւական էր ընկերոջը ճանաչելու: Այդպիսի ոյժ ունի ճանապարհորդութիւնը: Արշաւախմբի անդամները մօտիկից ուսումնասիրեցին գիւղը և Սևանայ մենաստանը, շնչեցին Գեղամայ լեռների օդը, մտերմացան նոր մարդկանց հետ, ցոյց տուին իրանց և արժանացան գովքի:

Այսպիսի փոքր էքսկուրսիայի մասին այսչափ երկար կանգ առնել չարժէր. բայց քանի որ աւելի մեծ և լայն ծրագրով էկսկուրսիաները վեր են մեր ոյժերից, քանի որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չէր կարող մեզ Ռուսաստանի միջին նահանգները կամ արտասահման ուղարկել և որովհետև հարիւր վերստ հեռու գտնվող վայրերում էկսկուրսիայի ենենն անգամ ահագին դժուարութեանց հետ է կապված և սակաւ է իրագործվում՝ մենք պէտք եղածից աւելի մանրամասն նկարագրեցինք մեր էկսկուրսիան, որպէսզի յետագայում աւելի յաճախ կատարվեն այսպիսի փորձեր, օրինակ վերցնելով մեր ճանապարհորդութիւնից: Տարիներ յետոյ, երբ Ներսիսեան դպրոցը կը ծաղկի իր նոր շէնքում, երբ հնարաւորութիւն կունենայ իր աշակերտներին ստէպ-ստէպ գաւառ ուղարկել՝ ճանապարհորդելու, ծանօթանալու համար, և կը կազմակերպէ մեծ էկսկուրսիաներ, միակ բաղձանքը, որ մենք կուզէինք ասել այդ էկսկուրսիաների վերաբերմամբ այն է, որ դրանք լինեն առանց առաջնորդի, առանց ուսուցչի. թող աշակերտներն իրանք իրանց գլխին գնան. այդպիսով նրանք աւելի մեծ բաւականութիւն կը ստանան, աւելի շատ կօգտվեն:

Ներսիսեան դպրոցի հին շէնքի, գուցէ և հին շրջանի վերջին արգասիքներս այդպէս ինքնագլուխ ճանապարհորդեցինք և անչափ օգտվեցինք:

Շնորհակալութիւն նրանց, որոնք օգնեցին մեզ մեր խոշոր մտադրութիւնների և մեծ ծրագիրների այս փոքրացված, [illegible] և կրճատված էքսկուրսիայի իրականացմանը:

Գ. Տէր-Ռուբէնեան

նոյն գործով մեղադրվող և բանտից գրաւականով արձակվածներից շատերը եկել են Թիֆլիս՝ այստեղ ստանալու մեղադրական ակտը։ Թիֆլիսում գտնվող մեղադրվողների համար Պետերբուրգից գալու են յայտնի փաստաբաններ՝ օտզիվները գրելու համար։

◆ Ստացված է պ. Կ. Գ. Ղալամեանից ութ րուբլի, ուղարկելու՝ 4 րուբլի Ղազախի Վերին-Աղդանի և 4 րուբլի Սև-քարի ծխ. դպրոցների հոգաբարձութեան՝ յիշեալ դպրոցների գրադարանների համար դասագրքեր գնելու և չքաւոր աշակերտներին բաժանելու ի յիշատակ նուիրատուի քրոջ դստեր՝ տիկին Մարիամ Չիբուխչեանցի։ Յիշեալ գումարը ուղարկեցինք Կ. Հ. Բ. Ընկ. Ղարվանսարա գիւղի տեղական ճիւղին՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

◆ Սուրախանում Բագուի նաւթային ընկերութեան նաւթահորերից մինում սեպտեմբերի 3-ին խփեց ֆօնտան, որ օրվայ մէջ տալիս է մօտ կէս միլիօն պուդ նաւթ։

◆ Օգոստոս ամսում Ապշերօնեան թերակղզում ստացվել է ընդամենը 30,844,563 պուդ նաւթ։

◆ «Վլադիկավկազ-Թիֆլիս» աւտօմօբիլային ընկերութեանը թոյլատրված է աւտօմօբիլների հաղորդակցութիւն հաստատել Թիֆլիսի և Վլադիկավկազի միջև Ռազմավիրական ճանապարհի վրայով։

◆ Թիֆլիս է եկել Բաթումի զինուորական նահանգապետ Ռօմանօվսկին։

◆ Օգոստոս ամսվայ մէջ Թիֆլիսում երևան հանվեց 51 վարակիչ հիւանդութիւն։

◆ Նահանգական վարչութիւնը հաստատեց դումայի որոշումը՝ քաղաքում էլեքտրական լուսաւորութիւն հաստատելու գործը Զէլօկաեվի ֆիրմային յանձնելու մասին։ Այժմ նահանգական վարչութեան որոշումը ներկայացված է Կովկասի Փոխարքայի հայեցողութեանը։

◆ Վրաց դրամատիկական դերասանական խումբը համարեա կազմված է արդէն։

◆ Լիզա Աբգարեանը իր հիւանդ ծծկեր երեխայի հետ միասին միանգամայն անօգնական, բոլորովին թշուառ դրութեան մէջ՝ խնդրում է միայն հացի օգնութիւն, որ քաղցած չը մնան։ Հասցէն՝ Ֆօմինսկայա պեր., տուն Ջանումօվի, № 18։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Արտիստական Թատրօնում ձմեռային սէզօնի բացումը տեղի կունենայ շուտով։ Կը խաղայ ռուսաց դրամատիկական խումբը՝ տ. Ե. Մ. Բօյարսկայայի ղեկավարութեամբ։

Խումբը բաղկացած է 33 հոգի դերասան-դերասանուհիներից, որոնց մէջ կան առաջնակարգ ույժեր։ Ռէպէրտուարը կազմված է նոր պիէսներից, որպիսիք այս սէզօնին պիտի ներկայացվեն նոյնպէս մայրաքաղաքների Կայսերական և Գեղարուեստական թատրօններում։ Բացի ռէպէրտուարի մէջ մտած նոր պիէսներից, կը դրվեն նաև ինքնուրոյն և թարգմանական կլասիկ պիէսներ։

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Պատմութիւն հայ գրականութեան, Վ. Փափազեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 817+XII+160, գ. 1 ր. 50 կ.։ 2) Մանչէստրի հայ գաղութը, Մուշեղ եպիսկոպոսի, Բօստօն, 1911 թ., էջ 270, գ. 50 սենտ։ 3) Հայ սովորութական իրաւունքը, Խ. Սամուէլեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 101, գ. 50 կ.։ 4) Կեանքի կալէյդօսկօպ, Գ. Տէր-Ղևոնդեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 40, գ. 8 կ.։ 5) Քաղքի բօխչէքը անդերձ պրէյսկուրանտով, Գ. Փ.-ի, Թիֆլիս, 1911 թ., էջ 31, գ. 5 կ.։ 6) Շիրվանզադէ եւ իր երկը, Գր. Մալխասի, Ղալաթիա (Կ. Պօլիս), 1911 թ., էջ 88, գ. 5 ղրուշ։ 7) Армянскія древности въ Аккерманѣ (въ Бессарабіи), Л. М. Меликсеть-Бекова, Թիֆլիս, 1911 թ., էջ 42, գ. 25 կ.։ 8) Ամենքի համար Աստուած մէկ է, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 16, գ. 5 կ.։ 9) Քոյրերը, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 16, գ. 5 կ.։ 10) Աքլորի դատը, Գուրգէն Հայկունու (Ս. Հայկունու առակներից), պատկերազարդ, Թիֆլիս, 1911 թ., էջ 10, գ. 20 կ.։ 11) Ճղճիկ, Գուրգէն Հայկունու (Ս. Հայկունու առակներից), պատկերազարդ, Թիֆլիս, 1911 թ., էջ 2, գ. 5 կ.։ 12—14) Դասընկեր, Ա., Բ. և Գ. տարի, պատկերազարդ, կազմեցին Արշակ Ջիլինկարեան, Տիգրան Ռաշմաճեան և Աւ. Իսահակեան, Թիֆլիս, 1911 թ.։ Ա. տարի, էջ 96, գ. 40 կ.։ Բ. տարի, էջ 126, գ. 50 կ.։ Գ. տարի, էջ 160, գ. 60 կ.։ 15) Ոստան, եռամսեայ մեծ պարբերագիր, Կ. Պօլիս 1911 թ., էջ 715, գ. 13 ղրուշ։ 16) Արազած պատկերազարդ շաբաթաթերթի №№ 10, 11, 12, 13 և 14, Նիւ-Եօրկ, 1911 թ.։ 17) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 32, 33 և 34, Նիւ-Եօրկ, 1911 թ.։ 18) «Ծաճար» շաբաթաթերթի №№ 29, 30 և 31, Կ. Պօլիս, 1911 թ.։ 19) Извѣстія Тифл. Городск. Думы, № 7—8. Թիֆլիս, 1911 թ.։ 20) «Բազմավէպ» ամսագրի № 7 (յուլիս), Վենետիկ, 1911 թ.։ 21) «Աստղ Բեթղէհէմի» ամսաթերթի № 6-ը, Կ. Պօլիս, 1911 թ.։ 22) «Բժիշկ» ամսաթերթի № 6-ը, Տրապիզօն, 1911 թ.։ 23) Подагогическія сочиненія, Л. Н. Толстаго, С.-Петербургъ, 1911 г., էջ 134. 24) «Mécheroutiette» organe du Partie Radical Ottoman, № 21 (Août), 1911 թ., Պարիզ։ 25) Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործ. Ընկ. յիսնամեակը (1860—1910), Նոր-Նախիջևան, 1911 թ., էջ 38+38. 26) Հաշիւ Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգ. Ընկ. 1910 թ. գործունէութեան, Նոր-Նախիջևան, 1911 թ., էջ 40. 27) Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողովի տեղեկագիրը 1909 թ. օգոստ. 7—1911 թ. յունիսի 30, պատկերազարդ, Կ. Պօլիս, 1911 թ., էջ 140. 28) Տեղեկագիր 1909—1910 ուսումն. տարվայ Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի, Թիֆլիս, 1911 թ., էջ 45. 29) Միացեալ Ընկերութիւնք Հայոց. վարժարանք, դպրոցական տարեշրջան 1910—11. Կ. Պօլիս, 1911 թ., էջ 21։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կիէվի վարչական անձերի մէջ, Ստօլիպինի սպանութեան առիթով, կատարվում են մեծ փոփոխութիւններ։ Այդ առիթով խօսվում է նաև ներքին գործերի մինիստրի օգնական Կուրլօվի հրաժարականի մասին, որ Կայսրի ճանապարհորդութիւնից երկու շաբաթ առաջ եկաւ Կիէվ և անձամբ կազմակերպեց քաղաքի պաշտպանողական գործը պահնորդական բաժանմունքի պաշտօնեաների օգնութեամբ։

◆ Ստօլիպինին սպանող Դիմիտրի Բօգրօվը երկու տարի պաշտօն էր վարում պահնորդական բաժանմունքում և մատնում էր սօցիալիստ յեղափոխականներին։ Ասում են, որ վերջերս կուսակցութիւնը առաջարկեց Բօգրօվին իր մեղքերը քաւելու համար սպանել Պ. Ա. Ստօլիպինին։ Բօգրօվը համաձայնեց։ Մահափորձը լինելու էր դեռ սեպտ. 1-ին վաճառականների այգու մէջ։

◆ «У. Р.»-ն հակառակ միւս թերթերի՝ իր թղթակցի բերանով յայտնում է, որ Բօգրօվը պատկանում է Կիէվի յայտնի հրէայ ընտանիքի։ Հայրը մի ժամանակ թղթախաղի մէջ տարած է ունեցել մի միլիօն, բայց յետոյ տանուլ է տուել։

◆ Մեծ սենսացիա է յարուցում այն հարցը՝ թէ ինչպէս Բօգրօվը ձեռք բերեց տոմսակ թատրօն մտնելու համար։ Մի [illegible] ասում է, որ նա կարողացել է համոզել Կիէվի պահնորդական բաժանմունքի պետին, թէ Ստօլիպինի կեանքի դէմ մահափորձ է պատրաստվում, ուստի խնդրում է տալ իրան հնարաւորութիւն թատրօնում ցոյց տալու մահափորձ կատարելու եկած անձանց։ Վստահանալով այդ տեսակ առաջարկութեան, Բօգրօվին տալիս են պահնորդական բաժանմունքի համար յատկացված վեց տոմսերից մինը։

◆ Չը նայած որ Բօգրօվին թատրօնի հասարակութիւնը գանակոծութեան ենթարկեց, բայց և այնպէս դատախազի առաջ առաջին հարցաքննութեան ժամանակ նա իր ցուցումները տուեց գրաւոր կերպով։ Դատախազի մի նկատողութեան Բօգրօվը պատասխանեց. «Ստօլիպինը մինիստր է, իսկ ես համոզված տէրրօրիստ...»։

◆ Ստօլիպինին սպանող Բօգրօվին շղթայակապ, ուժեղ պահակախմբի հսկողութեան ներքոյ, Կիէվից տարան Պետերբուրգի բանտը։

◆ «Р. В.»-ի թղթակիցը Կիէվից գրում է, որ Բօգրօվը որոշ ժամանակ առաջ մտել է «սօիւզնիկների» շարքը, որոնք և Կիէվի պահնորդական բաժանմունքի պետի առաջ Բօգրօվին ցոյց տուեին իբրև իրանց վստահելի մարդը։ Մի կողմից էլ այդ հանգամանքը նպաստեց Բօգրօվին տոմսակ ստանալու.

◆ Փոքրիկ Ազէֆ-Բօգրօվի մասին մայրաքաղաքի թերթերը լի են զանազան ենթադրական ու հակասական լուրերով ու կենսագրութիւններով։

◆ «Русское Слово»-ն մի խիստ նկատողութիւն է տպել Ստօլիպինի կեանքի դէմ կատարված մահափորձի առիթով, անուանելով այդ խելառութիւն, հիւանդ մտքի արգասիք։

◆ Բօգրօվին դատելու են քր. պատ. 279-րդ յօդուածով, որ մահ է սպառնում մեղադրվողին։

◆ Պետական Դումայի հէնց առաջին նիստում աջակողմեանները և նացիօնալիստները հարցապնդում են ուղղելու կառավարութեան այն մասին, թէ ինչ հիման վրա է Կիէվի պահնորդական բաժանմունքը մուտքի տոմսակ տուել Բօգրօվին։

◆ Թէհրանի ռուսաց միսսիան սպառնում է կալանաւորել շատ յայտնի պարսկահպատակ անձերի։

◆ Սպանիան գտնվում է անհեղ դէպքերի նախօրեակին։ Փոքրիկ կայծն անգամ կարող է սոսկալի հրդեհ բորբոքել։ Ստորագրված է հրաման բոլոր պահեստի զինուորներին ծառայութեան կոչելու մասին։

◆ Մադրիդում յամառ կերպով խօսում են, որ մինիստրների խորհրդի մէջ վճռվել է դադարեցնել ամբողջ Սպանիայում սահմանադրութիւնը, եթէ գործադուլը չը վերջանայ։

◆ Ինչպէս ասում են, Կրասնօվօդսկում մի յատուկ նաւ սպասում է Մահմէդ-Ալիին տանելու համար։

◆ Թէհրանում ռուսաց հիւպատոսը կալանաւորել տուեց «Рѣчъ» և «Утро Россіи»-ի թղթակից Տէր-Օհանեանին։

◆ Լուրիստանի ամբողջ ազգաբնակութիւնը անցաւ Սալար-ուդ-Դօվլէի կողմը։

◆ Մազանդարանից ստացվեց մի սենսացիօն հեռագիր, իբր անգլիական մի լրագրի թղթակից ներկայանալով էկս-շահին խօսակցելու համար, մահափորձ է կատարել նրա կեանքի դէմ և իբր սպանել է էկս-շահին։ Թղթակիցը գլխատված չէ անգլիական կառավարութեան երկիւղից։

◆ Պարսկաստանում դրութիւնը չափազանց լուրջ է։ Սալար-ուդ-Դօվլէն պատրաստվում է յարձակվել Թէհրանի վրա երեք կողմից։

◆ Թաւրիզը գտնվում է օրհասական վտանգի մէջ։

◆ Ցունաց պատրիարքը դարձեալ բողոքագիր ուղարկեց Թիւրքաց մեծ վէզիրին՝ յոյների վերաբերմամբ քիւրդերի ցոյց տուած բռնութիւնների դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.
(Ե.ու.կ.) 220. 100—71

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien -ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. / երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(ա. օ.) 669. 100—17

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրաստ է եւ կարճ ժամանակից լոյս կը տեսնի
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
պատկերազարդ
կազմեց **Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ**
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I. Ներածութիւն։ II. Նախապատմական կուլտուրան։ III. Եգիպտոս։ IV. Միջագետք (Ասորեստան, Բաբելօն)։ V. Հայաստան (Ուրարտուի շրջան)։ VI. Արիական ցեղերն ու նրանց գաղթը։ VII. Իրան (Միդիա, Պարսկաստան)։ VIII. Յունաստան։ IX. Մակեդօնիա և X. Հռոմ։

Հայաստանի պատմութիւնը, միւս ազգերի պատմութեան հետ, զուգընթացաբար արված է մինչև հայերի քրիստոնէութիւն ընդունելը։

(Ե.հ.կ) 867. 3—2

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Կ Ր Օ Ն Ի
հետևեալ դասագրքերը.
Աշակերտաց համար

	Գինը	Զեղչ
1) Դասատետր կրօնի Ա. տարի	25	25°/₀
2) » » Բ. »	20	
3) » » ա) Գ. »	25	
4) » » բ) Գ. »	25	
5) » » Դ. »	25	
6) Նոր-ուխտ Ե. »	45	
7) Գործք առաքելոց Զ. »	45	
8) Հին-ուխտ . .	50	
Ուսուցչաց համար		
8) Մեթօդիկա Հին-Ուխտի	1—65	35°/₀
9) » Նոր-Ուխտի	2— 5	
10) Ուսուց. քրիստ. կրօնի Դ.	1—50	
11) » » » Ե.	— 50	

Կարելի է դիմել
1) Ինձ (Бебутовская ул. № 20).
2) «ԳԻՐ» և միւս հայ գրավաճառներին։
Սահակ ա.-ք. Սահակեանց
(Ե.ու.) 786. 10—9

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլաեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։
(ա. օ.) 818. 25—14

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ,
որ ուսել է Արղութեան դպրոցում, որոնում է պաշտօն հայ ընտանիքներում. կարող է ստանձնել տնային ամեն տեսակ ծառայութիւն, բացի խոհանոցայինից։ Հասցէն տեղեկանալ «Մշակի» գրասենեակից։
(Ե.հ.) 868. 2—2

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ
Հիմնված 1860 թ.
առաջարկում է նորերս վաճառքի հանված նոր
Պարիզ 1900.

ХИМИЧЕСКАЯ
С.-ПЕТЕРБУРГСКАЯ
ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

ԾԱՂԿԵԱՅ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆ
„ДИВНАЯ АКАЦІЯ“
„НЕЗАБУДЬ МЕНЯ“
„ВОЛШЕБНАЯ ЛИЛІЯ“
Օրիգինալ ուժեղ, հրաշալի եւ տեւողական հոտ։
ԲԱՐՁՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆ։
Գլխաւոր պահեստը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами, Тифлисъ, Баку, Батумъ.
519. 8—5

Բ. Հ. Կ. Միութեան Կրթական Սեկցիայի Կանանց Արհեստագիտական Դպրոցի սպիտակեղէնի բաժնի համար հարկաւոր է մի հմուտ և փորձված վարժուհի, որ կարողանայ անթերի աւանդել սպիտակեղէնի և հարթակարի դասերը։

Ցանկացողները մինչև ամսիս 12-ը թող դիմեն Վարչութեան Նախագահին այս հասցէով. Баку, уг. Больш. Морской и Биржевой ул., домъ Цейтлина. Предсѣдательницѣ школы С. М. Адамовой.

Բ. Հ. Կ. Միութեան Կրթական Սեկցիայի Կանանց Արհեստագիտական Դպրոցում աշակերտուհիների ընդունելութիւնը սկսված է սեպտեմբերի 5-ից, և կը շարունակվի մինչև 10-ը։

Ցանկացողները դիմեն Վարչութեան նախագահին այս հասցէով. Баку, уг. Больш. Морской и Биржевой улицъ, домъ Цейтлина. Предсѣдательницѣ школы С. М. Адамовой.
(օ.մ.) 870. 3—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում է **ԲԱՐՏԷԶ**



ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՅԱՍՏԱՆ
ԵՒ
ՀԱՐԵՒԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ.
Կազմեց Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, նկարեց Գ. ԴԻՐՍՏԵՐԴԻԿ.

ԳԻՆԸ 4 Ր. (առանց կազմի)
Մեծաքանակ գնողներին որոշ զեղջ։
Դիմել կազմողին Թիֆլիս, Ванкскій пер. № 7 և «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրօնական» ու այլ հայ գրավաճառներին։
(Ե.հ.կ.) 875. 5—1

Հրատարակութիւն «ՊԵՍՏԱԼՈՑՑԻ» գրատան
ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆՈՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐ ԳՈՒՆԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Լոյս են տեսել
1) ԴԵՐՁԱԿ ԱՂՈՒԷՍԸ . . 25 կ.
2) ԱՔԼԱՐԻ ԴԱՏԸ . . 20 »
3) ՃՂՃԻԿ . . . 5 »

Տպագրվում են
4) ՄԱՐԴԻԿ ԱՊԵՐԱԽՏ
5) ԲԱԴՆ ՈՒ ԳՈՐՏԸ
6) ՊԱՄ ՊԱՀՈՂ ԱՂՈՒԷՍԸ
7) ԿԱՏՈՒԻ ԲԻԼԷԹԸ

Գումարով գնողներին սովորական զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. Книжный и писчебумажный магазинъ «Песталоцци», Михайл. пр., № 99.
(հ.կ.) 874. 6—1

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՆՈՐ ՄԵԹՕԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ եւ ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Շտապողական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ առ. ժամը 10—12-ը և եր. 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24/4.
(Ե. հ. շ.) 862. 0—3

Լոյս տեսաւ
ԱՐՇԱԿ ՋԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
կազմած հայոց լեզուի դասագիրք
ԴԱՍԸՆԿԵՐ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ երկրորդ տիպ (բարեփոխված) . . 40 կոպ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ երկրորդ տիպ » . . 50 կոպ.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ . . . . 60 կոպ.
ԴԱՍԸՆԿԵՐ Ա. և Բ. տարի բարեփոխված ու ճոխացված են գունաւոր պատկերներով, յօդուածներով և ձեռագիր վարժութիւններով։ Գ. տարին ևս ունի արտագրութեան համար ձեռագիր յօղուածներ՝ ուղղագրական որոշ կանոնների և գեղագրութեան նկատառմամբ։
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում (Թիֆլիս)
Գումարով առնողներին զեղջ 20°/₀։
Ցանկացողները դիմեն Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ».
(Ե. հ.) 561. 4—4

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.